ՄԱՍՆԱԳԻՏԱԿԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ
ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԱԶԳԱՅԻՆ
ԿԵՆՏՐՈՆ ՀԻՄՆԱԴՐԱՄ

ANQA-2022/72

ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՀԱՆՁՆԱԺՈՂՈՎ
Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

15 սեպտեմբերի 2022 թ. N 72

ՇԻՐԱԿԻ Մ. ՆԱԼԲԱՆԴՅԱՆԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆԻ ԻՆՍՏԻՏՈՒՑԻՈՆԱԼ ԿԱՐՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԱՎԱՏԱՐՄԱԳՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ընդհանուր տեղեկություն հաստատության մասին

Հաստատության լրիվ անվանումը՝ «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամ

Գործունեության հասցեն՝ ՀՀ, ք. Գյումրի, Պարույր Սևակի 4

Նախորդ հավատարմագրման մասին
որոշումը և ժամկետը՝ 4 տարի ժամկետով 22.09.2016-22.09.2020

«Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի Հավատարմագրման հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով), ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 978–Ն որոշմամբ հաստատված «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման» կարգով, «ՀՀ մասնագիտական կրթության հավատարմագրման չափանիշները հաստատելու մասին» 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ, «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի (այսուհետ՝ ՈԱԱԿ) հավատարմագրման հանձնաժողովի ձևավորման և գործունեության ընթացակարգով և «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգով, 2022թ.սեպտեմբերի 15-ին քննարկեց «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի (այսուհետ՝ ՇՊՀ, Համալսարան, բուհ) ինստիտուցիոնալ կարողությունների հավատարմագրման հարցը:

Հավատարմագրման գործընթացի հիմնական փուլերն իրականացվել են հետևյալ ժամկետներում.

դիմում-հայտի ներկայացում	03 հունիսի 2019 թ.
վերանայված ինքնավերլուծության ներկայացում	17 դեկտեմբերի 2021թ
փորձագիտական այցի իրականացում	15-18 մարտի 2022 թ.
փորձագիտական զեկույցի ներկայացում	14 հունիսի 2022 թ.
թերությունների վերացման նախնական ծրագրի ներկայացում	18 հուլիսի 2022 թ.

ՄՈՒՀ-ի ինստիտուցիոնալ կարողությունների փորձաքննությունն իրականացրել է «Մասնագիտական կրթության որակի ապահովման ազգային կենտրոն» հիմնադրամի փորձագիտական խմբի ձևավորման կարգ»-ի պահանջներին համապատասխան ձևավորված անկախ փորձագիտական խումբը: Գնահատումը կատարվել է ՀՀ կառավարության 2011 թվականի հունիսի 30-ի N 959–Ն որոշմամբ հաստատված ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներով:

Ինստիտուցիոնալ հավատարմագրման 10 չափանիշներից 3-ը՝ **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր» և «Հետազոտություն և զարգացում»,** գնահատվել են անբավարար:

Հանձնաժողովը, ուսումնասիրելով Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարանի կողմից ներկայացված ինստիտուցիոնալ կարողությունների ինքնավերլուծությունը, զեկույցի նախնական տարբերակի վերաբերյալ քոլեջի դիտողությունները և առաջարկությունները, փորձագիտական զեկույցը, զեկույցում նշված թերությունների վերացման գործողությունների ծրագիրը, լսելով քոլեջի փորձագիտական գնահատման վերաբերյալ Հանձնաժողովի նախագահի կողմից ընտրված երեք անդամների եզրակացությունները, որոնք ձևավորվել են փորձագիտական խմբի անդամների և ուսումնական հաստատության ներկայացուցիչների հետ հանդիպումների արդյունքում, ինչպես նաև Հանձնաժողովի անդամների դիտարկումներն ու առաջարկությունները, ամրագրեց հետևյալը.

1. **Առկա են հիմնարար խնդիրներ և ռիսկեր որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն կան առաջխաղացման միտումներ և օրինակներ**

ՇՊՀ-ում գործող կրթական ծրագրերը համապատասխանում են ՈԱՇ-ի պահանջներին:

ՄԿԾ-ների մշակման գործընթացում բուհը ներգրավել է նաև գործատուներին և ուսանողներին:

Սակայն Համալսարանն ունի որորշակի անելիքներ ՄԿԾ-ների վերանայման, վերջնարդյունքների սահմանման, կամընտրական բաղադրիչի ընդլայնման, կիրառական և գործնական հմտությունների ձևավորման առումով: Կրթական ծրագրերում բացակայում են գործնական հմտությունների զարգացմանն ուղղված վերջնարդյունքները, որոշ ՄԿԾ-ներում չի երևում տվյալ մասնագիտության վերջնարդյունքի և դասընթացների նկարագրիչներում նշված վերջնարդյունքների փոխկապակցվածությունը: Ընդհանուր առմամբ հստակ չէ, թե տվյալ վերջնարդյունքի ձեռքբերումը ինչ առաջադրանքներով, դասավադման և ուսումառության ինչ մեթոդներով է ապահովվում: Թեև առկա է գնահատման համակարգ, սակայն հստակ չէ նաև՝ ինչպես է գնահատվելու վերջնարդյունքը:

Բուհն ապահովված է հիմնական, համապատասխան գիտական աստիճան ունեցող դասախոսական կազմով և կայունության տեսանկյունից ռիսկեր չեն նկատվում, սակայն գործնական հմտություններ ունեցող, գործատու-դասավանդողների թիվը բավականին սահմանափակ է: Գործատու-բուհ կապի խզումը և հատվածային համագործակցությունները չեն նպաստում գործատուների պահանջներին համապատասխան շրջանավարտների պատրաստմանը:

ՄԿԾ-ների համար սահմանված պրոֆեսորադասախոսական կազմի մասնագիտական որակներին ներկայացվող հստակ պահանջներ դեռևս առկա չեն:

ՇՊՀ-ն ունի անհրաժեշտ ռեսուրսներ՝ ուսումնական միջավայրի ստեղծման և սահմանված առաքելության ու նպատակների արդյունավետ իրականացման համար: Ռեսուրսների համալրումը

ՇՊՀ-ն իրականացրել է հիմնականում միջազգային ծրագրերից եկած ֆինանսական մուտքերից: Համալսարանի եկամուտների և ծախսերի նախահաշվով դրամական միջոցների բաշխումն ընդհանուր առմամբ չի իրականացվում ըստ ռազմավարական առաջնահերթությունների:

2. ***Կառավարման համակարգը ձևավորման փուլում է, առկա են զարգացման միտումներ. կառավարման ու որակի ապահովման համակարգերը միտված են որակի բարելավմանը, որակավորումների արժանահավատ շնորհմանը:***

Առաջին հավատրմագրումից հետո բուհը վերանայել է իր առաքելությունը, սակայն այն հավակնոտ է և վերանայման կարիք ունի: Առաքելությունը չի արտացոլում լոկալ հիմնախնդիրները, որոնք առկա են տարածաշրջանում:

ՇՊՀ-ում առկա է կառավարման համակարգի արդյունավետության խնդիր: Բուհում կառավարումն առավելապես իրավիճակային է և բացակայում է արդյունքահեն կառավարումը: 2015-2019 թթ. ՌԾ գործողությունների ժամկետի ավարտից հետո բուհը չունի նոր մշակված ՌԾ:

Երկարաժամկետ և կարճաժամկետ պլանավորման մշտադիտարկման մեխանիզմներն արդյունավետորեն չեն գործում, երկարաժամկետ, միջնաժամկետ և կարճաժամկետ պլանների և դրանց փաստացի կատարողականների միջև առկա են զգալի շեղումներ,բացակայում են կառավարման համակարգի արդյունավետության գնահատումները, արտաքին միջավայրի վերլուծությունները:

ՇՊՀ-ն վերանայել է կազմակերպական կառուցվածքը և վերաբաշխել գործառույթները: Սակայն հստակ մշակված ռազմավարական ծրագրի բացակայության պարագայում այս փոփոխությունները նույնպես իրավիճակային են:

Կառավարման և վարչարարության ոլորտում նախորդ հավատարմագրման խորհրդատվությունները հիմնականում իրականացված չեն:

ՇՊՀ-ում որակի ապահովման գործընթացը համակարգված է, առկա է փաստաթղթային հենք և գործընթացները միտված են որակի մշակույթի տարածմանը, բարելավմանը, կարողնում է վեր հանել առանցքային խնդիրներ: Վեր հանված խնդիրները, սակայն, որքանով են գտնում համապատասխան լուծումներ կառավարման բարձր օղակում, հստակ չէ:

2018 թվականից բուհում որակի ապահովման կենտրոնը միավորվել է և ստեղծվել է «Գիտական քաղաքականության, որակի ապահովման ու կառավարման կենտրոն»: Իրականացված փոփոխությունների արդյունքում վտանգված է որակի ապահովման անկախության սկզբունքը. կենտրոնը չունի բավարար անկախություն գնահատելու կառավարման և հետազոտության որակը:

Ընդհանուր առմամբ, կառավարման համակարգը ձևավորման փուլում է, սակայն առկա են զարգացման միտումներ: Որակի ապահովման համակարգը աջակցում է կրթության որակի բարելավման գործընթացներին:

3. ***Միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը բավարար չեն աջակցում որակավորորումների արժանահավատ շնորհմանը.***

Առաջին հավատարմագրումից հետո բուհն իրականացրել է որոշակի բարեփոխումներ ինչպես միջազգայնացման, այյնպես էլ՝ հետազոտական աշխատանքների որակի բարելավման նպատակով:

Սակայն բուհի կողմից դեռևս սահմանված չեն ինստիտուցիոնալ մակարդակով հետազոտական ոլորտում իր հետաքրքրությունները և հավակնություններն արտահայտող ռազմավարությունը:
Համալսարանում 2014 թ.-ից ներդրվել և գործում է աշխատակիցների գիտահետազոտական և գիտամեթոդական աշխատանքների խթանման ընթացակարգը: Հետազոտական կարողությունները բարձրացնելու նպատակով բուհի բակալավրիատի և մագիստրատուրայի կրթական ծրագրերում ներդրվել են որոշ առարկաներ, սակայն ուսանողներն ունեն հետազոտական հմտությունների պակաս:
ՇՊՀ-ում գործում է Արտաքին համագործակցության և հասարակության հետ կապերի կենտրոնը: Այս ստորաբաժանման միջոցով համալսարանը մասնակցել է միջազգային համագործակցության ավելի քան 10 ծրագրերի:
ՇՊՀ-ում կիրառվում է բազմամակարդակ հաշվետվողականության մեխանիզմ, հաշվետվությունները ներառում են որոշակի վերլուծական բաղադրիչ, քննարկելի են և հրապարակային, ընդհանուր առմամբ բուհը հասարակության շրջանում ապահովում է ընթացակարգերի, գործընթացների թափանցիկությունը և հասանելիությունը:
ՇՊՀ-ում իրականացվել են Շիրակի մարզի հանրակրթական ուսումնական հաստատությունների ուսուցիչների նախաատեստացիոն վերապատրաստման դասընթացներ, որոնց շարունակական իրականացումը պլանավորված է Համալսարանի կողմից:
Բուհում գործում են ուսանողների հավաքագրման, ընտրության և ընդունելության իրականացման մեխանիզմներ: Առկա է «ՇՊՀ ուսանողների կարիքների բացահայտման, օժանդակման և ուղղորդման կարգ» և դրան համապատասխան իրականացվում է ուսանողների կրթական կարիքների ուսումնասիրություն: 2018թ.-ից ՇՊՀ-ում ներդրվել է ակադեմիական խորհրդատվությունների ծառայություն, որը կազմակերպվում է ուսումնագիտական խորհրդատվական կենտրոն-գրադարանի կողմից:
Ուսանողների կարիերային առնչվող ծառայությունները դեռևս արդյունավետ չեն գործում:
Ուսանողների մոտ առկա է հետազոտություն իրականացնելու մեթոդաբանության պակաս:
Ընդհանուր առմամբ բուհում միջազգայնացումն ու հետազոտական/ստեղծագործական գործունեությունը զարգացման միտումներ ունեն և աջակցում են որակավորումների արժանահավատ շնորհմանը:

4. Փորձագիտական զեկույցում նշված թերություններն առանցքային են որակավորումների արժանահավատ շնորհման տեսանկյունից, սակայն ստեղծված են հիմքեր բարելավումների համար:
5. Թերությունների վերացման ծրագիրն ըստ էության ներառում է փորձագետների կողմից տրված հիմնական խորհրդատվությունները: Ծրագիրն իրատեսական է և իրականացման դեպքում կբերի որակական բարելավումների:

Ելնելով վերը նշվածից, Հավատարմագրման Հանձնաժողովը բաց քվեարկության արդյունքում

ՈՐՈՇԵՑ

1. «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամին շնորհել պայմանական ինստիտուցիոնալ հավատարմագրում 2 /երկու/ տարի ժամկետով:

2. Հավատարմագրում շնորհելու մասին որոշման հրապարակումից հետո՝ երկամսյա ժամկետում ՈԱԱԿ-ին ներկայացնել փորձագիտական զեկույցում նշված թերությունների վերացման

վերանայված ծրագիր և համապատասխան ժամանակացույց՝ հաշվի առնելով **«Կառավարում և վարչարարություն», «Մասնագիտության կրթական ծրագրեր» և «Հետազոտություն և զարգացում»** ոլորտներում առկա խնդիրներին առաջնահերթ լուծում տալու անհրաժեշտությունը:

3. **Հատուկ ուշադրություն դարձնել.**
   - Համալսարանի առաքելության, նպատակների և խնդիրների, կրթական կարիքների գնահատման գործընթացներում ներքին և արտաքին շահակիցների մասնակցության ակտիվացմանը,
   - իրականացվող գործընթացների արդյունավետության գնահատման հստակ և չափելի որակական և քանակական ցուցիչներ ունենալու անհրաժեշտությանը,
   - վերհանված խնդիրներին լուծումներ տալու անհրաժեշտությանը,
   - ՊԴ կազմում երիտասարդ և պրակտիկ ոլորտում լավ փորձ ունեցող մասնագետների ներգրավմանը,
   - տվյալների հավաքագրման, արդյունքների վերլուծման և որոշումների կայացման գործընթացում դրանց կիրառմանը,
   - հետազոտական և ուսումնական գործընթացների փոխկապակցմանը, գործնական հմտությունների ձեռքբերմանը,
   - Համալսարանի բոլոր գործընթացներում ՊԻԳԲ շրջափուլի կիրառմանը,
   - ուսանողների մոտ վերլուծական, ստեղծագործական և քննադատական կարողությունների զարգացմանը միտված ուսուցման կազմակերպմանը:

4. «ՀՀ մասնագիտական կրթական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների և դրանց մասնագիտությունների պետական հավատարմագրման կարգ»-ի 12-րդ կետի պահանջներին համապատասխան 6 (վեց) ամիսը մեկ անգամ ՈԱԱԿ-ին գրավոր զեկույց ներկայացնել իրականացված գործողությունների արդյունքների վերաբերյալ՝ գնահատելով ակադեմիայի գործունեության բարելավումները, նորարարություններն ու ձեռքբերումները:
5. Հանձնարարել ՈԱԱԿ-ին պարտադիր մշտադիտարկել «Շիրակի Մ. Նալբանդյանի անվան պետական համալսարան» հիմնադրամի գործունեության արդյունավետությունն՝ ըստ առաջընթացի առանցքային ցուցիչների:

Հավատարմագրման Հանձնաժողովի նախագահ **Ա. Սաղյան**

2022 թ. սեպտեմբերի 23
ք.Երևան